ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

19 ապրիլի 2024թ.

N 106-Ա

ՀՐԱՄԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ֆինանսների նախարարության սոցիալական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության փորձագետի աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

4/19/2024

x

ԱՐՄԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Signed by: POGHOSYAN ARMAN 3809820482

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
« » ապրիլի 2024թ. N 106-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

1.1 Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սոցիալական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության (այսուհետ՝ Վարչություն) կանոնադրական խնդիրներից բխող որոշ գործառույթների ամբողջական և պատշաճ իրականացման անհրաժեշտությամբ:

2. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Վարչության կանոնադրությամբ սահմանված սոցիալական և առողջապահական ոլորտների բյուջետային ծրագրավորման կազմակերպման բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ուղղությամբ վերլուծությունների և կանխատեսումների իրականացում, մասնակցություն Վարչության գործառույթներից բխող աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

3.1 Պայմանագիրը կնքելու պահից մեկ տարի ժամկետով:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

4.1 Փորձագետի ներգրավմամբ ակնկալվում է սոցիալական և առողջապահական ոլորտների կողմից իրականացվող «1202 Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում», «1207 Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» և «1208 Վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծրագիր» ծրագրերի գծով պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման, ինչպես նաև առաջիկա տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակման ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը, վերլուծությունների և կանխատեսումների իրականացումը, բյուջետային ծրագրերի գնահատումը, ինչպես նաև այդ ուղղություններով կիրառվող գործիքների կատարելագործումն ու նորերի մշակումը: Առողջապահության

5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1 Փորձագետի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը նախատեսվում է ներկայացնել յուրաքանչյուր 3-րդ ամիսը լրանալու նախորդ օրը:

6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

6.1 Աշխատանքների գնահատման չափանիշներն են՝

6.1.1 Սոցիալական և առողջապահական գծով ոլորտային նախարարությունների կողմից իրականացվող «1202 Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում», «1207 Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» և «1208 Վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծրագիր» ծրագրերի գծով ներկայացված բյուջետային հայտերի և ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունների և շնորհանդեսների կազմում, զեկույցների ներկայացում.

6.1.2 Առողջապահության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների, այդ թվում հաշվարկների, մեխանիզմների ուսումնասիրության արդյունքում եզրակացության տրամադրում.

6.1.3 Վերը նշված ծրագրերի գծով ՄԺԾԾ-ի և առաջիկա տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակման համար անհրաժեշտ ցուցանիշների գնահատում և կանխատեսումների ներկայացում.

6.1.4 Վերլուծական փաստաթղթերի և հաշվետվությունների (այդ թվում՝ միջազգային ֆինանսական կառույցների) վերաբերյալ մասնագիտական կարծիքի ներկայացում:

6.2 Փորձագետի կողմից կատարված աշխատանքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

7. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

7.1 Փորձագետին ներկայացվող պահանջներն են՝

7.1.1 Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.

7.1.2 Բարձրագույն կրթություն տնտեսագետի առնվազն բակալավրի որակավորմամբ.

7.1.3 Առնվազն երկու տարվա հանրային ծառայության ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

7.1.4 Իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքներ).

7.1.5 Թիմային աշխատանքի ունակություն.

7.1.6 Տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կառավարման ունակություն.

7.1.7 Տնտեսական վերլուծությունների և հետազոտությունների իրականացման ունակություն.

7.1.8 Հաշվետվությունների և շնորհանդեսների կազմման և ներկայացման ունակություն

8. ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1 Փորձագետի պարտականություններն են՝

8.1.1 Բյուջետային գործընթացի շրջանակներում համապատասխան գործառույթների իրականացում, (պետական կառավարման մարմինների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ներառյալ բյուջետային ֆինանսավորման) հայտերի կազմման և անհրաժեշտ հաշվարկների կատարման համար մեթոդական ցուցումների մշակման աշխատանքներին մասնակցություն, սոցիալական և առողջապահական գծով ոլորտային նախարարությունների կողմից իրականացվող «1202 Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում», «1207 Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» և «1208 Վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծրագիր» ծրագրերի գծով ներկայացված բյուջետային ֆինանսավորման հայտերի վերլուծություն, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ելքերի ֆինանսական ծրագրավորում և բյուջետային փաթեթի ամբողջական փաստաթղթի ամփոփում ու ներկայացում և այլն).

8.1.2 Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսվող Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով իրականացվող հատկացումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված հատկացումների վերաբաշխումների կատարման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

8.1.3 Առողջապահության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների, այդ թվում հաշվարկների, մեխանիզմների ուսումնասիրության արդյունքում եզրակացության տրամադրում.

8.1.4 Միջազգային կազմակերպությունների, պետական կառավարման մարմինների, Նախարարության այլ ստորաբաժանումների գրություններում բարձրացվող տարբեր հարցերի, ինչպես նաև ստացված իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ) ներկայացման, արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման նախահաշիվների ցուցանիշների վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքների իրականացում: